ԿՏԱԿՆԵՐ

Ա. Հանգուցեալ Աթանաս Ժամհարեանը կտակել է 250,000 ռ. Կովկասում երկրագործական ուսումնարան բանալու համար։

Հանգուցեալի եղբայրներն այդ գումարի վերայ աւելացնում են 4000 դես. հող Գանձակի և Ջիւանշիրի գաւառներում, և Շուշի քաղաքում մի տուն, որով երկրագործական ուսումնարանի անունով Ժամհարեանների նուէրը հասնում է մօտ մէկ միլիոն ռուբլու։

—

Բ. Հանգուցեալ Աւետիք Բալայեան Ղուկասեանի միակ դուստր Թամարի մահուամբ նրա կտակով մօտ մի և կէս միլիոն ռուբլի մնում է հայ հոգևոր բարձր իշխանութեան — Ամենայն Հայոց Կաթուղիկոսի և Կ. Պոլսոյ Հայոց պատրիարքի—տրամադրութեան տակ՝ Տաճկա-Հայաստանում մի բարձրագոյն ուսումնարան բանալու և պահպանելու համար, հանգուցեալի անունով։

—

Գ. Մոսկվայում ապրող Սարգիս Ջանումեանը, ինչպէս հաղորդում են լրագրները, որոշել է կտակել իբրև «Ֆոնդ» 200,000 ռուբլի, այդ գումարը տրուելու է Ս. Էջմիածնի անունով և գումարի տոկոսիքով, որ տարեկան մօտ 10,000 ռ. է լինելու, ամենայն Հայոց Հայրապետը պէտք է օժանդակի գիւղական աղքատ դպրոցներին։

—

Դ. Տիկին Վարվառէ Փանանեանը «Իզմիրլեան Հայրապետի» անուան Ֆոնդին նուիրել է 1,000 ռ.

—

Ս. Պետերբուրգի հայ եկեղեցին, ինչպէս հաղորդում է «Գիւղատնտեսը», յատկացրել է Տնայնագործ. ընկերութեան՝ 2,500, Էջմիածնի ճեմարանին և Թեմ. դպրոցներին, Ախալցխայի Կարապետեան, և Ալէքսանդրոպոլի Արղութեան դպրոցներին 1500-ական ռուբլի գիւղատնտեսական դասընթացքներ կազմակերպելու։

Յունվարի 2-ին Ս. պատարագից յետոյ միաբանութիւնը պատարագչի հետ եկեղեցական թափօրով դուրս գալով տաճարից Հանգուցեալ Տ. Մատթէոս Բ. Կաթուղիկոսի թաղման 15-րդ օրուայ կարգը կատարեց։

Յունվարի 27-ին Հանգուցեալ Մատթէոս Բ. Սրբազնագոյն Հայրապետի թաղման քառասունքին Ամենապատիւ Տ. Գէորգ Արքեպիսկոպոսի կարգադրութեամբ հանդիսաւոր սուրբ պատարագ մատուցուեց, որից յետոյ միաբանութիւնը շուրջառաւորուած եկեղեցական թափօրով դուրս եկաւ տաճարից և կատարեց քառասունքի կարգը։ Ներկայ էին ճեմարանի բոլոր աշակերտները, ուսուցչական խումբը և բաւական թուով ժամաւորներ։

Յունվարի 2-ին Մայր Տաճարում ս. պատարագից յետոյ հոգեհանգստեան պաշտօններ կատարուեցին հանգուցեալ Ամանաս ժամհարեանի համար։

Յունվարի 23-ին հանգուցեալ օրիորդ Թամարա Աւետիսեան Ղուկասեանի համար։

Յունվարի. 30-ին՝ երբեմն հրատարակուող «Մեղու Հայաստանի» լրագրի խմբագիր նորոգ հանգուցեալ Պետրոս Միմէոնեանցի համար։

Ստացուած գրքեր.

1. Աստպեսի երկերի ժողովածու հատոր ժ.—Իրանի պատուհասները —պատկեր, արկածներ և վիպակներ, (արտատպութիւններ). Թիֆլիս 1910 թ. գինն է 1 ռ., ընտիր թղթի վերայ հատորը 2 ռ։

2. 1911 г. Армяно—Григоріанскій Календарь, годъ изданія третій, свящ. С. Теръ Ованесянца. 20 коп.

Складъ изданія Ставрополь

3. Բագուի Հայոց մարդասիրական ընկերութեան վարչութեան զեկուցումը 1910 թ. նոյեմբերի 28 և դեկտեմբերի 25 արտակարգ ընդհանուր ժողովին։

*